

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ (3-6 ՏԱՐԵԿԱՆ) ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԿԱՀՈՒՅՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Ռուբեն Վազգենի Մնացականյան¹, Լատրա Արայի Մնացականյան¹,
Լուսինե Պետրոսի Պետրոսյան²

¹Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

²Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, ք. Երևան, ՀՀ

^{*}rubenmayan@yandex.ru

Հոդվածում ներկայացված է նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կահույքի նախագծման սկզբունքները, օրենքները և մեթոդները: Բերված են մանկական կահույքի նախագծման օրինակներ: Մինչ մանկական կահույքի նախագծմամբ զբաղվելը, պետք է խորապես ուսումնասիրել բոլոր տեսակետների յուրահատկությունները, սկսած երեխաների հոգեբանությունից մինչև ձևերը, կոնստրուկցիաները, նյութերը, գույնը: Այս բոլոր հարցերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո միայն կարելի է սկսել մանկական կահույքի նախագծումը:

Բանալի բառեր. մանկական կահույք, նախագծում, դիզայն, կահույքի հավաքածու

Ներածություն

Կար ժամանակաշրջան, երբ մանկական կահույքը դիտարկում, նախագծում և պատրաստում էին՝ հաշվի առնելով միայն երգոնոմիկան, այսինքն կարճացնում էին սեղանի ու աթոռների ոտքերը և փոքրացնում եզրաչափքը: Մինչև երեք տարեկան երեխաներին ծնողները հիմնականում սովորեցնում են քայլել, նստել, խաղալ փափուկ կամ փշովի խաղալիքներով, կարդում են հեքիաթներ և այլն: Երեխաներն արդեն երեք տարեկանից հետո քայլում են ինքնուրույն, նրանք վստահ են, որ կարող են ինքնուրույն շատ բաներով զբաղվել, այստեղից էլ ծնվում է ցանկություն մեծահասակների հետ սեղան նստել և նրանց նմանակել [1]: Ահա այստեղ էլ ստեղծվում է անհրաժեշտություն նախադպրոցական տարիքի երեխաների համար (3-6 տարեկան) այնպիսի կահույքի տեսակի ստեղծման, որը կլինի ոչ միայն ֆունկցիոնալ, այլ նաև կձառայի որպես խաղալիք-կոնստրուկտոր: Այդ պատճառով մանկական կահույքի նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել, որ այն լինի հավաքովի մեթոդով, ձևերի անվտանգությամբ, որպեսզի չլինեն ֆիզիկական վնասվածքներ, գունավորումը ևս պետք է լինի հատուկ անվնաս ներկերով և լաքերով: Քանի որ կահույքը նախատեսված է նախադպրոցական տարիքի երեխաների համար, և նրանք դա պետք է շահագործեն մոտ 5 տարի շարունակ, ապա պետք է ստեղծել այնպիսի կոնստրուկտիվ մեթոդներ, որ հնարավոր լինի կարգավորել նստատեղի և սեղանի մակերևույթի բարձրությունն երգոնոմիկ նորմերին համապատասխան [2]:

Կահույքը նախագծելիս նաև պետք է հաշվի առնել մտավոր և սոցիալ-տնտեսական գործոնները: Մանկական կահույքը պետք է հասանելի լինի ազգաբնակչության լայն շրջանակին: Այդ պատճառով դիզայներները, որոնք զբաղվում են մանկական կահույքի նախագծմամբ, ցանկալի է

օգտագործեն ավելի շատ ընդհանրական դետալներ, ինչը թույլ կտա արտադրողին քչացնել ապրանքների ինքնարժեքը [3]:

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրությունը կատարվել է, օգտվելով համացանցում առկա գրականությունից, կայքերից, հետազոտություններից, ինչպես նաև ելնելով անձնական փորձառությունից և իրականացրած նախագծերից: Ստորև ներկայացված են նախադպրոցական տարիքի երեխաների համար կահույքի նախագծման կարևոր սկզբունքները և նախագծման ընթացքում հնարավոր խնդիրների լուծման տարբերակները:

Որպես հետաքրքիր լուծում, նախագծողները կարող են առաջարկել կահույք 2...3*մմ* հաստությամբ ստվարաթղթից՝ օգտագործելով ճարտարապետական հմտությունները: Կարելի է ստեղծել տարատեսակ կոնստրուկցիաներ ստվարաթղթե մանրաթելային տարրերով, որոնք կարելի է ծալել և հավաքել պլաստիկ պտուտակների օգնությամբ: Խաղային տարրերը կարելի է նախագծել պոլիուրեթանային դյուրամերից՝ մակերևույթը ամուր է, քաշը՝ թեթև [4]:

Հետաքրքիր լուծումներ կարելի է առաջարկել փշատերև ծառատեսակներից, որը համարվում է էկոլոգիապես ամենամաքուր նյութը [5]:

«Արայիկ» կահույքի նախագծման ժամանակ հաշվի են առնվել վերը թվարկված բոլոր պահանջները: «Արայիկ» մանկական կահույքը նախագծվել է նախադպրոցական տարիքի երեխաների համար և կարող է կիրառություն գտնել ինչպես տնային պայմաններում, այնպես էլ մանկական կենտրոններում: Աթոռը և սեղանն ունեն գործառական չափեր, երեխայի ֆիզիոլոգիական զարգացման պահանջների յուրահատկություններին համապատասխան: Սեղանի և աթոռի կոնստրուկցիաները քանդվող-հավաքվող են (նկ. 1): Սեղանի կոնստրուկցիան բաղկացած է հետևյալ էլեմենտներից՝ երկու կողային ոտքերից, վերին կափարիչից, երկու դարակներից և երկու կողային սեղանի ներքևի դարակներից, բարձր միջոտային հորիզոնական/ուղղահայաց տարրից և չորս օգնող պտուտակներից: Սեղանի ներքևի հատվածի կարճ ակոսների, կափարիչի և դարակների վրայի բարձր հատվածների առկայությունը թույլ են տալիս հավաքել սեղանը չորս նորմալիզացված M-6x60 պտուտակների օգնությամբ և կարգավորել կափարիչի բարձրությունը՝ 430 *մմ*, 470 *մմ*, 510 *մմ*, 550 *մմ* բարձրություններով: Սեղանը ծածկված է տարբեր գույների անթափանց ներկով: Աթոռի տարբերվող յուրահատկությունն այն է, որ նստատեղի բարձրությունն ունի կարգավորման հնարավորություն, կախված երեխայի հասակից (երեք դիրք). 240 *մմ*, 270 *մմ*, 300 *մմ*: Աթոռի կոնստրուկցիան նույնպես հավաքվող է: Այն բաղկացած է հետևյալ էլեմենտներից՝ երկու կողային ոտքերից, միասնականացված նստատեղից և թիկնակից, միջոտային հորիզոնական/ուղղահայաց տարրից և 6 հատ M-6x60 օգնող պտուտակներից:



Նկ. 1. Մանկական կահույք «Արայիկ», հեղ.՝ Ռ. Մնացականյան, ք. Երևան, 1971 թ.

Միջոտային հորիզոնական/ուղղահայաց տարրի վրայի ակոսների և երեք անցքերի առկայությունը բոլոր կողային հատվածներում թույլ է տալիս հավաքել աթոռը 6 պտուտակների օգնությամբ և կարգավորել նստատեղի բարձրությունը: 240*մմ* և 270*մմ* բարձրության դեպքում երեխան ունի հնարավորություն հենվել և չընկնել: Սեղանի և աթոռի եզրային գծերը և ժամանակակից ձևերը չունեն սուր անկյուններ: Աթոռի կողային ոտքերի ետին հատվածի կորաձևությունը թույլ է տալիս շրջված դիրքում օգտագործել այն որպես մանկական խաղալիք-օրորոց: Այս կահույքը պատրաստվում է ՄԴՖ-ից կամ 0,8...10 *մմ* հաստությամբ սոսնձային ֆաներայից: Բոլոր դետալների արտաքին եզրերն ունեն ծածկույթ: Բոլոր տարրերի հավաքովի լինելը թույլ է տալիս ամբողջ հավաքածուն տեղավորել 650x450x120 *մմ* չափերով արկղի մեջ, ինչը բարձրացնում է ապրանքի արտաքին մակերևույթի որակը և հեշտացնում փախադրականությունը:

«Արայիկ» կահույքի հավաքածուի դիզայնը, կոնստրուկցիան և տեխնոլոգիան արժանացել է միջազգային ճանաչման և ստացել է երկու հեղինակային վկայական, ոսկե մեդալ, դիպլոմ ք. Մոսկվայում, «БДНХ» ցուցահանդեսի շրջանակներում և արտադրվել է մերձբալթյան երկրներում, Հունգարիայում և Մոնղոլիայում: Այս կահույքի նախագծի հեղինակն է դիզայներ, ճարտարապետ Ռուբեն Մնացականյանը:

«Արայիկ» կահույքի կոնստրուկցիայի հիման վրա նախագծվել է «Ֆուտբոլիստ» հավաքածուն, որը նախատեսված էր 2018 թ. Ռուսաստանում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության կապակցությամբ (նկ. 2), ինչպես նաև «Շախմատիստ» մանկական կահույքի հավաքածուն: Այս երկու նախագծերն էլ ունեն հեղինակային վկայականներ (հեղինակներ՝ Ռուբեն Մնացականյան, Լաուրա Մնացականյան):

«Ֆուտբոլիստ» հավաքածուն իր դիզայնով տարբերվում է «Արայիկ» կահույքի հավաքածուից իր ձևերի որոշակիությամբ: Սեղանի ոտքերը պատկերում են այս կամ այն ակումբի համազգեստը, աթոռի ձևը ֆուտբոլային գնդակ է հիշեցնում, որի վրա պատկերված է աշխարհի առաջնության տարբերանշանը:



Նկ. 2. Մանկական կահույք «Ֆուտբոլիստ», հեղ.՝ Ռ. Մնացականյան, Լ. Մնացականյան, ք. Երևան, 2018 թ.

Այս կահույքի տեխնոլոգիան այնպիսին է, որ հավաքածուի պատրաստումից հետո, սեղանի և աթոռների կողային հատվածների ճիշտ նույն չափերով ինքնակաշուն թղթի վրա տպագրվում են համազգեստների պատկերները, տարբերանշանը և հավաքածուն գնելիս տրվում է երեխայի նախընտրած այս կամ այն ակումբի համազգեստի պատկերը:

«Շախմատիստ» մանկական կահույքի հավաքածուն տարբերվում է ինչպես ձևով, այնպես էլ կոնստրուկցիայով: Սեղանի ոտքերն ունեն շախմատային նավակի տեսք: Ի տարբերություն նախորդ երկու հավաքածուների «Շախմատիստ» հավաքածուի սեղանը շարժական կափարիչով տուփ է, որի վրա մի կողմից տպագրված է շախմատային խաղատախտակ և ամբողջ շախմատային հավաքածուն իր ֆիգուրներով տեղավորվում է այդ դարակում: Աթոռի ոտքերը հիշեցնում են շախմատային ձիեր, իսկ նստատեղը և թիկնակը՝ շախմատի թագուհի: Կահույքի մակերևույթը ծածկված է անթափանց ներկերով (նկ. 3): Այս հավաքածուն ապամոնտաժված վիճակում տեղավորվում է տուփի մեջ:



Նկ. 3. Մանկական կահույք «Շախմատիստ», հեղ.՝ Ռ. Մնացականյան, Լ. Մնացականյան, ք. Երևան, 2020 թ.

Ժամանակակից մանկական կահույքի նախագծումը կենտրոնանում է ոչ միայն ֆունկցիոնալության և անվտանգության ապահովման, այլև երեխայի զարգացման համար նպաստավոր

միջավայրի ստեղծման վրա [6]: Գլխավոր սկզբունքներն են՝ էրգոնոմիկա, բազմաֆունկցիոնալություն, կայունություն և էկոլոգիական մաքրություն: Ժամանակակից բնակարաններում տարածքի օպտիմալ օգտագործումը կարևոր է: Մանկական կահույքը հաճախ նախագծվում է բազմաֆունկցիոնալ սկզբունքով. օրինակ՝ մահճակալ-սեղան կամ պահարան-խաղալիք պահարան համակցումներ [7]: Սա թույլ է տալիս տնտեսել տարածքը և ապահովել առավել հարմարավետություն: Օգտագործվող նյութերը, ինչպես նաև գույներն ու ձևերը, պետք է նպաստեն երեխայի հոգեկան և հուզական բարեկեցությանը: Մոտեցումը ներառում է նաև տեխնոլոգիական լուծումների ներդրում, ինչպիսին են՝ խելացի կահույքի ամբողջականացումն անվտանգության համակարգերով կամ լույսի և ձայնի կառավարումը [8]: Կահույքի շարքային արտադրության դեպքում անհնար է ճանաչել յուրաքանչյուր անհատ օգտագործողի բոլոր յուրահատկությունները: Ուստի պետք է կատարել սակավաթիվ ընտրական նմուշառում այն օգտագործողների համար, որոնց համար նախատեսված է արտադրանքը, որպեսզի հնարավոր լինի գնահատել տվյալները: Այս պատճառով կահույքը պետք է արտադրվի տարբեր չափերով կամ պետք է լինի կարգավորվող տարբեր մեխանիզմներով: Մեծածավալ մարդաչափական հարցումները շատ թանկ են, ժամանակատար և դժվարությամբ են իրականացվում: Նման հետազոտություններ են կատարվում ամբողջ աշխարհում՝ մարմնի տարբեր մասերի վերաբերյալ, որոնք օգտակար են նախադպրոցական կահույքի նախագծման համար: Հետազոտությունները կենտրոնացած են տարբեր բնակչությունների վրա՝ տարբեր աշխարհագրական գոտիներում, սեռով, ազգությամբ կամ ռասայով պայմանավորված [9]: Մարդաչափությունից բացի, որը պետք է լինի աթոռների չափման հիմնական գործոնը, կարևոր պայման է նաև այն նպատակը, որի համար աթոռը պատրաստվում է (ուտելու, աշխատանքի, հանգստանալու և այլն): Աթոռների բարձրությունը պետք է համեմատելի լինի երեխաների ոտքերի բարձրության հետ, այսինքն՝ չպետք է լինի ոչ շատ փոքր, ոչ շատ մեծ: Թիկնարկի և նստատեղի միջև անկյունը պետք է լինի 100°-ից 105°-ի սահմաններում, որպեսզի մարմինը կարողանա հարմարավետ դիրք ընդունել: Նաև նստատեղի թեքությունը պետք է լինի 5°...7°: Ընդհանուր առմամբ, իրականում երբեք հնարավոր չի լինի միավորել և բավարարել բոլոր երեխաների և կահույքի բոլոր փոփոխականների (չափերի) պահանջները, հիմնականում՝ որոշակի խմբերում բարձրահասակ և ցածրահասակ երեխաների առկայության պատճառով նախագծող-դիզայներները պետք է ձգտեն առավելագույն համընկնումի, դիտարկված չափերի և երեխաների մարդաչափական փոփոխականների միջև [10]:

Նախագծողների շրջանում նաև լայն տարածում ունի մոդուլային կահույքի նախագծումը: Կահույքի մոդուլայնության հասկացությունը ենթադրում է բաղկացուցիչ մասերի՝ մոդուլների հավաքածուի ստեղծում, որոնք պատրաստված են միասնական ոճով: Այս մոդուլների համադրությամբ կարելի է ստանալ տարբեր հնարավոր ուրվանկարներ: Մոդուլները կարող են տարբերվել ոչ միայն իրենց ֆունկցիոնալությամբ և նշանակությամբ, այլև բարձրությամբ, լայնությամբ, խորությամբ և գույնով [11]: Սովորաբար, մոդուլները միմյանց հետ միանում են տարբեր ամրացման մեխանիզմների միջոցով կամ ստեղծում են ամուր կառուցվածք՝ հենվելով միմյանց

վրա: Բացի այդ, յուրաքանչյուր մոդուլ կարող է օգտագործվել անկախ մնացածից: Մոդուլային կահույքի անվիճելի առավելությունն այն է, որ սպառողը կարող է գնել միայն անհրաժեշտ մոդուլները՝ կազմելով նոր կահույք կամ լրացնելով արդեն գոյություն ունեցող կահույքի համակարգը նոր մոդուլներով: Մոդուլների միօրինակության շնորհիվ, եթե որևէ մոդուլ կոտրվի, այն կարելի է հեշտությամբ փոխարինել: Նախադպրոցական տարիքի երեխաների համար մոդուլային կահույքի նախագծման ընթացքում անհրաժեշտ է երեխայի մոտ առավելագույն հետաքրքրություն առաջացնել [12]: Մշակվող մոդուլային կահույքը պետք է գրավի տարբեր ֆիզիկական կարողություններ ունեցող երեխաների ուշադրությունը և ունենա բազմապիսի օգտագործման մեթոդներ: Երեխաների կահույքի համար անհրաժեշտ ֆունկցիաների ավելի հստակ պատկերացում կազմելու նպատակով վերլուծվել են երեխաների դաստիարակության և կրթության մեթոդները: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ խաղն ավելի մեծ դրական ազդեցություն ունի զարգացման վրա և հանդիսանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ամենաարդյունավետ միջոցը: Խաղի դերը երեխայի զարգացման գործում ակնհայտ է, քանի որ դրա միջոցով հնարավոր է հաջողությամբ ուղղել և բարելավել երեխայի մտավոր և ֆիզիկական ունակությունները [13]:

Արդյունքներ և քննարկում

Հետազոտությունը ցույց է տալիս, որ կահույքը պետք է լինի համապատասխան երեխաների հասակին և ֆիզիկական զարգացման մակարդակին՝ ապահովելով հարմարավետություն և անվտանգություն: Առաջարկվում են կլորացված անկյուններ, ճկուն չափսեր և էկոլոգիապես մաքուր նյութեր՝ երեխաների առողջությունն ու շարժունակությունն ապահովելու համար: Կահույքի չափերը պետք է համապատասխանեն երեխաների ֆիզիկական չափերին՝ խթանելու շարժունակությունը և նվազեցնելու հոգնածությունը: Մեղանների և աթոռների բարձրությունը պետք է կարգավորվող լինի տարբեր հասակի երեխաների համար: Կահույքը պետք է լինի կայուն, չսայթաքող: Մանկական կահույքի ձևավորման մեջ կարևոր են նաև վառ, բայց ոչ գրգռող գույները, որոնք նպաստում են երեխաների ճանաչողական ու զգացմունքային զարգացմանը: Խաղային գործընթացին լիովին ներգրավվելու համար մանկական կահույքը պետք է լինի բազմազան՝ զարգացնելով երեխայի տարբեր մտավոր որակները, ինչպիսիք են հիշողությունը, տարածական պատկերացումը, կախվածություններ գտնելու ունակությունը, այսինքն՝ առկա տարրերից, դետալներից և առարկաներից նոր համակցություններ ստեղծելու հմտությունը: Միաժամանակ, այն չպետք է սահմանափակի խաղացողին: Այսպիսով, կազմակերպվածության խնդիրը լուծելու համար մանկական կահույքը կարող է լինել մոդուլային, ինչը կարծես մեկտեղում է կահույքի ֆունկցիան կոնստրուկտորի հետ:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կահույքի նախագծման նրբությունները, սկզբունքները և տեսակները, ինչպես նաև ներկայացնելով մի քանի հեղինակային հավաքածուների օրինակներ, կարելի է նախագծման մեջ որոշ հիմնական և կարևոր կետեր նկատել. նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կահույքը պետք է լինի անվտանգ, կարգավորվող բարձրությամբ, հետաքրքիր, պարզ, հավաք, մոնտաժվող, մշտապես պետք է հաշվի առնել երգոնոմիկ նորմերը, մատչելիությունը, շահագործման երկարակեցությունը: Նաև կարելի է փաստել, որ վիճակագրական համեմատությամբ անհնար է համատեղել և բավարարել բոլոր օգտագործողների և կահույքի փոփոխականները, հիմնականում որոշակի խմբերում բարձրահասակ և ցածրահասակ երեխաների առկայության պատճառով, ուստի պետք է ձգտել առավելագույն համընկնումի դիտարկված աթոռի չափերի և երեխաների մարդաչափական փոփոխականների միջև: Այս իրավիճակը բարելավելու համար պետք է ստեղծել բազմահավաք թիմեր, որոնք աշխատեն համապատասխան մարմնի դիրքերի վերաբերյալ կրթության և իրազեկման հարցերի վրա, և միաժամանակ բարելավեն նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կահույքի դիզայնը: Այդ տարիքի երեխաների համար կահույքի նախագծման գործընթացում կարևոր է հաշվի առնել մանկավարժական, ֆունկցիոնալ և երգոնոմիկ պահանջները: Խաղի միջոցով ուսուցման առանձնահատկությունները ցույց են տալիս, որ կահույքը պետք է խթանի երեխայի ստեղծագործականությունը, տրամաբանական մտածողությունը և ֆիզիկական ակտիվությունը: Դիտարկելով նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված մոդուլային կահույքը՝ պարզ է դառնում, որ այն ունի կրթական և զարգացման խթանող ազդեցություն՝ միաժամանակ ապահովելով բազմաֆունկցիոնալություն և հարմարվողականություն: Մոդուլային կառուցվածքի շնորհիվ այն նպաստում է երեխայի ստեղծագործական մտածողության, տարածական պատկերացման և թիմային աշխատանքի զարգացմանը՝ առանց սահմանափակելու խաղային գործընթացի ազատությունը: Մոդուլային կահույքը հեշտացնում է մանկավարժական նպատակներին հասնելը՝ երեխաներին տրամադրելով բազմազան ինտերակտիվ հնարավորություններ:

Գրականության ցանկ

- [1] **А.О. Гурович**, Столярные белодеревянные работы, Москва, 1954, 347 с.
- [2] **Б.В. Нешумова, Е.Д. Щедрина**, Художественное проектирование, Москва, 1979, 171 с.
- [3] **М.В. Федоров**, Художественное конструирование промышленных изделий, Москва, 1967, 175 с.
- [4] **Д. Кес**, Стили мебели, Будапешт, 1981, 272 с.
- [5] **О.Г. Ярусова**, Разработка модульной детской мебели для дошкольного образовательного учреждения, Санкт Петербург, 2013, с. 238-241.
- [6] **Е. Пругова**, Ключевые принципы создания детской мебели, Москва, 2022, <<https://designmate.ru/read/an-experience/childrens-furniture-in-russia-principles-materials-and-prospects>>.
- [7] **М.О. Васильева, Е.Н. Пыжова**, Эргономика проектирования и технология создания детской мебели, Москва, 2016, с. 12-16.

- [8] **И.А. Бринюк, В.Ю. Радченко**, Особенности проектирования развивающей модульной мебели для детей, Томск, 2018, с. 406-408.
- [9] **М. Монтерссори, М. Королева**, Роль детской мебели в развитии ребенка, Москва, 2018, <<https://www.alteregohome.ru/blog/istoriya-detskoj-meбели-chast-1/>>.
- [10] **Е.В. Гуляева**, Информационные системы моделирования комплекса детской мебели из дерева. Междунар. науч. студент. конф. “Инновационное развитие легкой и текстильной промышленности” (ИНТЕКС-2019), 2019, с. 3.
- [11] **М. Шилов, К. Городов**, Организация детского пространства, Москва, 1995, 178 с.
- [12] **В. Пиев, D. Domljan, Z. Vlaović**, Importance of anthropometric data in design of preschool furniture. In: Proc. of the 7th Internat. Ergonomics Conf. Ergonomics—Emphasis on Wellbeing, Sumpor, D.(ed.). Croatian Ergonomics Society, Zadar, Croatia, 2018, pp. 141-148.
- [13] **И.А. Бринюк, В.Ю. Радченко**, Особенности проектирования развивающей модульной мебели для детей. Тр. Междунар. конф., по компьют. граф. и зрен. Графикон, №. 28, Фед. гос. учрежд. “Федеральный исследовательский центр Институт прикладной математики им. М.В. Келдыша РАН”, 2018, с. 406-408.

ДИЗАЙН И ПРОЕКТИРОВАНИЕ МЕБЕЛИ ДЛЯ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА (3-6 ЛЕТ)

Рубен Вазгенович Мнацакян^{1*}, Лаура Араевна Мнацакян¹, Лусине Петросовна Петросян²

¹Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

²Государственная академия художеств Армении, г. Ереван, РА

*rubenmayan@yandex.ru

В статье представлены принципы, закономерности и методы проектирования мебели для детей дошкольного возраста. Прежде чем приступить к проектированию детской мебели, необходимо глубоко изучить особенности всех аспектов, от детской психологии до форм, конструкций, материалов, цвета. Только после тщательного изучения всех этих вопросов можно приступить к проектированию детской мебели.

Ключевые слова: детская мебель, проектирование, дизайн, коллекция мебели

FURNITURE DESIGN AND ENGINEERING FOR PRESCHOOL CHILDREN (3-6 YEARS OLD)

Rouben Mnatsakanyan^{1*}, Laura Mnatsakanyan¹, Lusine Petrosyan²

¹National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

²State Academy of Fine Arts of Armenia, Yerevan, RA

*rubenmayan@yandex.ru

This article presents the principles, laws, and methods of designing furniture for preschool children. Before starting to design children's furniture, it is necessary to study in depth the features of all aspects, from child psychology to shapes, structures, materials, colors. Only after careful study of all these issues can you start designing children's furniture.

Keywords: Children's furniture, engineering, design, furniture collection

Մնացականյան Ռուբեն Վազգենի, դոցենտ (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Բնակարանային և էքստերիորի ամբիոն, արվեստի վաստակավոր գործիչ, (+374)91300053, rubenmayan@yandex.ru, **Մնացականյան Լաուրա Արայի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Բնակարանային և էքստերիորի ամբիոն, մագիստրոս, (+374)99538982, l.mnacakanyan2000@gmail.com, **Պետրոսյան Լուսինե Պետրոսի** (ՀՀ, ք. Երևան) – ՀԳՊԱ, Գրգայնի ամբիոն, դասախոս, ասպիրանտ, (+374)98229987, lus8990@gmail.com
Мнацаканыя Рубен Вазгенович, доцент, Заслуженный деятель искусств, (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Интерьера и экстерьера (+374)91300053, rubenmayan@yandex.ru, **Мнацаканыя Лаура Араевна** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Интерьера и экстерьера, магистр, (+374)99538982, l.mnacakanyan2000@gmail.com, **Петросян Лусине Петросовна** (РА, г. Ереван) – ГХАА, кафедра Дизайна, преподаватель, аспирант, (+374)98229987, lus8990@gmail.com,
Mnatsakanyan Ruben, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Department of Interior and Exterior Design, honored Artist, (+374)91300053, rubenmayan@yandex.ru, **Mnatsakanyan Laura** (RA, Yerevan) – NUACA, Department of Interior and Exterior Design, Master (+374)99538982, l.mnacakanyan2000@gmail.com, **Petrosyan Lusine** (RA, Yerevan) – State Academy of Fine Arts of Armenia, Department of Design, Lecturer, PhD student, +374 98 22 99 87, lus8990@gmail.com

Ներկայացվել է՝ 28.10.2024թ.

Գրախոսվել է՝ 27.11.2024թ.

Ընդունվել է տպագրության՝ 25.12.2024թ.